Հավելված
Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2021թ. դեկտեմբերի 9-ի նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան
«09» դեկտեմբերի 2021թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԷԹԻԿԱՅԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԳԼՈՒԽ I
Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդին կից Էթիկայի մշտական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) գործառույթների և լիազորությունների իրականացման, որոշումների, եզրակացությունների ընդունման կարգը, ինչպես նաև կարգավորում է Հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ հարաբերություններ:

2. Հանձնաժողովն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն է:

ԳԼՈՒԽ II
Հանձնաժողովի, հանձնաժողովի նախագահի և անդամների իրավասությունները

3. Հանձնաժողովը՝

1) Էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հաղորդումների հիման վրա հարուցում է ԵՊՀ գիտական խորհրդին եզրակացություն տրամադրելու վերաբերյալ վարույթներ,

2) էթիկայի կանոնների խախտման դեպքերի վերաբերյալ կազմում և ԵՊՀ գիտական խորհրդին տրամադրում է եզրակացություններ,

3) ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացնում է առաջարկություններ ԵՊՀ-ում էթիկայի կանոնների պահպանման վեաբերյալ ծագած հարցերի շուրջ,

4) տալիս է պարզաբանումներ էթիկայի կանոնների կամ առանձին կանոնի վերաբերյալ,

5) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

4. Հանձնաժողովի նախագահը՝

1) իր իրավասության շրջանակում ներկայացնում է Հանձնաժողովը ԵՊՀ մարմինների հետ հարաբերություններում,

2) ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում է նիստի օրակարգը.

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները:

5. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին և քվեարկում, Հանձնաժողովի նիստի ժամանակ կարող է հանդես գալ ելույթներով, հարցերով և առաջարկություններով.

2) մեծամասնության կարծիքից տարբերվող կարծիք ունենալու դեպքում ներկայացնում է հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը.

3) Հանձնաժողովին և Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է առաջարկություններ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ III
Էթիկայի կանոնների խախտման դեպքերի քննարկման կարգը

6. Էթիկայի կանոնների խախտման դեպքերի վերաբերյալ Հանձնաժողովին կարող են դիմել ԵՊՀ կառավարման մարմինները, դրանց անդամները, ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, աշխատողները և սովորողները:

7. Հաղորդումը պետք է ներկայացվի գրավոր և պարունակի էթիկայի կանոնի խախտման նկարագրությունը, ինչպես նաև խախտում թույլ տված անձին նույնականացնող տվյալները: Անստորագիր հաղորդումները քննարկման ենթակա չեն:

8. Հաղորդումը ստանալու օրը Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամների կազմից նշանակում է տվյալ հաղորդումով զեկուցողի, ով չի կարող լինել Հանձնաժողովի այն անդամը, ում վերաբերյալ ներկայացված է հաղորդումը, ինչպես նաև ոչ ուշ, քան հաղորդումը ստանալու հաջորդ օրը Էթիկայի կանոնների ենթադրյալ խախտում թույլ տված անձին իրազեկում է իր վերաբերյալ հաղորդում ստանալու մասին, եթե հնարավոր է նույնականացնել վերջինիս:

9. Սույն աշխատակարգով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, զեկուցողը նշանակման պահից մեկօրյա ժամկետում պարտավոր է Հանձնաժողովի նախագահին հայտնել ենթադրյալ խախտում թույլ տված անձի կամ դիմողի հետ շահերի բախման առկայության մասին:

10. Հանձնաժողովի նախագահը նոր զեկուցողին նշանակում է իրազեկումը ստանալու օրը:

11. Հաղորդումը ստանալու պահից առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) հաղորդման հիման վրա վարույթ հարուցելու մասին,

2) հաղորդման ընդունումը մերժելու մասին,

3) հաղորդումը վերադարձնելու մասին,

4) հաղորդումը ռեկտորին վերահասցեագրելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդին դիմելու մասին:

12. Հաղորդման ընդունումը մերժվում է, եթե այն ստորագրված չէ, կամ միաժամանակ բացակայում են էթիկայի կանոնի խախտման նկարագրությունը և խախտում թույլ տված անձին նույնականացնող տվյալները:

13. Հաղորդումը վերադարձվում է, եթե բացակայում են էթիկայի կանոնի խախտման նկարագրությունը կամ խախտում թույլ տված անձին նույնականացնող տվյալները:

14. Հանձնաժողովը հաղորդումը ռեկտորին վերահասցեագրելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդին դիմելու մասին որոշում է ընդունում, եթե այն առերևույթ պարունակում է ԵՊՀ ներքին կարգապահական կանոնների խախտման հատկանիշներ և առերևույթ չի պարունակում էթիկայի կանոնի հնարավոր խախտման հատկանիշներ:

15. Հաղորդման ընդունումը մերժելու հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովը կարող է ընդունել միայն հաղորդման ընդունումը մերժելու մասին որոշում:

16. Հանձնաժողովն իր կողմից ընդունված որոշման մասին որոշման ընդունման պահից մեկ օրվա ընթացքում իրազեկում է հաղորդում ներկայացրած անձին, ինչպես նաև էթիկայի կանոնի ենթադրյալ խախտում թույլ տված անձին, եթե հնարավոր է եղել նույնականացնել վերջիններիս:

17. Հաղորդման հիման վրա վարույթ հարուցելու մասին որոշման մասին Հանձնաժողովը իրազեկում է ԵՊՀ գիտական խորհրդին:

18. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից Հանձնաժողովին ուղարկված կամ վերահասցեագրված հաղորդման հիման վրա Հանձնաժողովը պարտավոր է հարուցել վարույթ, եթե չկան հաղորդման ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքեր:

19. Հաղորդման ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերի առկայության դեպքում այդ մասին Հաձնաժողովը ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում իրազեկում է ԵՊՀ գիտական խորհրդին՝ տրամադրելով եզրակացություն:

20. Հանձնաժողովի եզրակացության հիման վրա ԵՊՀ գիտական խորհուրդը հաղորդումը վերադարձնում է հասցեատիրոջը, եթե հնարավոր է նույնականացնել վերջինիս կամ հաղորդումը թողնում է առանց քննության կամ սեփական նախաձեռնությամբ հարուցում է վարույթ և դրա քննությունը հանձնարարում Հանձնաժողովին:

21. Վարույթի հարուցումից հետո Հանձնաժողովը էթիկայի կանոնների ենթադրյալ խախտում թույլ տված անձից գրավոր պահանջում է խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ, որը չի կարող պակաս լինել, քան բացատրություն ներկայացնելու պահանջը ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրը:

22. Էթիկայի կանոնների ենթադրյալ խախտում թույլ տված անձն իրավունք ունի հրաժարվել բացատրություն ներկայացնելուց: Հանձնաժողովի կողմից սահմանված

ժամկետում բացատրություն չներկայացնելու դեպքում համարվում է, որ Էթիկայի կանոնների ենթադրյալ խախտում թույլ տված անձը հրաժարվել է բացատրություն ներկայացնելուց:

23. Վարույթի հարուցումից հետո Հանձնաժողովի կողմից եզրակացությունը տրամադրվում է մեկամսյա ժամետում:

24. Վարույթի արդյունքերով Հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Էթիկայի կանոնների խախտման առկայության վերաբերյալ եզրակացությունը ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացնելու մասին,

2) Էթիկայի կանոնների խախտման բացակայության վերաբերյալ եզրակացությունը ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացնելու մասին,

3) վարույթը կարճելու մասին եզրակացությունը ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացնելու մասին:

25. Հանձնաժողովը կայացնում է վարույթը կարճելու մասին եզրակացությունը ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացնելու մասին որոշում, եթե՝

1) հաղորդումն ակնհայտ անհիմն է,

2) հաղորդում ներկայացրած անձը մինչև վարույթի ժամկետի ավարտը գրավոր հրաժարվել է հաղորդումից, բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովը եզրակացնում է, որ էթիկայի կանոնի խախտումը վերաբերում է ԵՊՀ հեղինակությանը կամ բարի համբավին,

3) անձի արարքում բացակայում են էթիկայի կանոնի խախտման հատկանիշները, սակայն առերևույթ առկա են կարգապահական կանոնների խախտման հատկանիշներ:

26. Վարույթը հարուցելու պահից մեկ ամսվա ընթացքում որևէ որոշում չընդունելու դեպքում համարվում է, որ Հանձնաժողովն ընդունել է Էթիկայի կանոնների խախտման բացակայության վերաբերյալ եզրակացությունը ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացնելու մասին որոշում՝ բացառությամբ սույն աշխատակարգի 27-րդ կետով սահմանված դեպքերի:

27. Եթե Հանձնաժողովի անդամների շահերի բախման արդյունքում հնարավոր չէ ապահովել նիստերի քվորումի և/կամ որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը, ապա Հանձնաժողովի նախագահը ԵՊՀ գիտական խորհրդին գրավոր ձևով հայտնում է Հանձնաժողովի կողմից որոշում ընդունելու անհնարինության մասին՝ նշելով անհնարինության հիմքերը:

ԳԼՈՒԽ IV
Հանձնաժողովի որոշումների ընդունման կարգը

28. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում

քվեարկության դրված որոշումը համարվում է չընդունված, և քննարկվում է սույն աշխատակարգով նախատեսված այլ որոշումներից որևէ մեկն ընդունելու հարցը:

29. Էթիկայի կանոնի խախտման վերաբերյալ վարույթի արդյունքներով ընդունվող որոշման քննարկմանը և քվեարկությանը մասնակցելու իրավունք չունի Հանձնաժողովի այն անդամը, ով տվյալ գործով ունի շահերի բախում ենթադրյալ խախտում թույլ տված անձի կամ դիմողի հետ կամ հաղորդումը վերաբերում է վերջինիս կողմից էթիկայի կանոնի ենթադրյալ խախտմանը:

30. Սույն աշխատակարգի 29-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովի համապատասխան անդամը, հիմքի ծագման կամ դրա մասին իմանալու պահից 5 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան մինչև նիստով ըստ էության քննարկում սկսելու պահը, գրավոր, իսկ նիստի ընթացքում բանավոր իրազեկում է Հանձնաժողովին՝ նշելով ինքնաբացարկ հայտնելու մասին:

31. Հանձնաժողովի անդամի ինքնաբացարկը համարվում է ընդունված՝ առանց քննարկման:

32. Հանձնաժողովի նույն անդամի կողմից այլ գործով կրկին ինքնաբացարկ հայտնելու դեպքում Հանձնաժողովը կարող է չընդունել ինքնաբացարկը, եթե գտնի, որ դրա համար սույն աշխատակարգով սահմանված հիմքերը բացակայում են: Սույն աշխատակարգի 29-րդ կետով սամանված հիմքերով Հանձնաժողովի անդամին կարող են բացարկ հայտնել Հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովի այլ անդամ:

33. Սույն աշխատակարգով նախատեսված ինքնաբացարկի հիմքերի առերևույթ բացակայության պայմաններում Հանձնաժողովի անդամի կողմից երկու կամ ավելի անգամ ինքնաբացարկ հայտնելը, ինչպես նաև ինքնաբացարկի հիմքերի առերևույթ առկայության դեպքում ինքնաբացարկ չհայտնելը համարվում է էթիկայի կանոնների խախտում:

34. Հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ:

ԳԼՈՒԽ V
Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման կարգը

35. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում և որոշումներն ու եզրակացությունները ընդունում է նիստերի միջոցով:

36. Հանձնաժողովի նիստերը գումարվում են որոշակի պարբերականությամբ կամ ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի պահանջով:

37. Հանձնաժողովի նիստն անցկացվում է Հանձնաժողովի գտնվելու վայրում կամ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ այլ վայրում:

38. Հանձնաժողովի նիստը նախագահում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ սահմանված նրան փոխարինող անդամը, իսկ եթե Հանձնաժողովի նախագահի՝ որպես Հանձնաժողովի անդամի, լիազորությունները դադարել կամ դադարեցվել են, ապա՝ Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

39. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին:

40. Հանձնաժողովի նիստը նախագահողի համաձայնությամբ Հանձնաժողովի անդամները նիստին կարող են մասնակցել տեսաձայնային կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

41. Հանձնաժողովը հարցերը քննում է դռնբաց նիստում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ շահագրգիռ անձանց շահերի կամ բարոյականության պաշտպանության նպատակով Հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կամ դրա առանձին մասն անցկացնել դռնփակ:

42. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին հարցը քննարկվում է դռնփակ:

43. Հարցը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու մասին որոշում կայացվելու դեպքում նիստին կամ դրա առանձին մասին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է նիստը նախագահողը:

44. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են գրավոր համառոտագրման, իսկ համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ ձայնագրման կամ տեսաձայնագրման միջոցով: Գրավոր արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ նիստի անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, օրակարգի, ելույթների և քվեարկության արդյունքների վերաբերյալ: Գրավոր արձանագրությունը ստորագրում են Հանձնաժողովի՝ նիստին մասնակցած բոլոր անդամները: Համառոտագրումն իրականացնում է Հանձնաժողովի անդամներից մեկը՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ:

ԳԼՈՒԽ VI
Եզրափակիչ դրույթներ

45. Սույն աշխատակարգն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և կիրառման մեջ է դրվում հրապարակման պահից 10 օր հետո:

46. Սույն աշխատակարգը հրապարակվում է ԵՊՀ պաշտոնական կայքում:

47. Սույն աշխատակարգը տարածվում է այն կիրառման մեջ դնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

48. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանը վերաբերող և սույն աշխատակարգով չկարգավորված հարցերը կարող են կարգավորվել Հանձնաժողովի որոշումներով, որոնք չպետք է հակասեն սույն աշխատակարգով սահմանված դրույթներին: Այդ որոշումները հրապարակվում են ԵՊՀ պաշտոնական կայքում:

49. Սույն աշխատակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են դրա ընդունման համար սահմանված ընթացակարգով: